

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2025 -2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.8-րդ կետի, համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) նախագիծը: Հրազդան համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների պահանջներին համապատասխան:

2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ, ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում: Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համայնքի հնգամյա զարգացման ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքն է, որը հնարավորություն է տալիս առավել իրատեսական և առարկայական դարձնել նախատեսվող ծրագրերը: Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն տալով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Համայնքային ոլորտային գերակայությունները որոշվում են ինչպես համայնքների զարգացման

հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունների հիման վրա:

Սոցիալ-մշակութային ոլորտներում կարևորվում են սոցիալական ապահովության բնագավառում ուշադրությունը անապահով ընտանիքներին, արցախահայության, թոշակառուների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության և հաշմանդամների լուծում պահանջող խնդիրները:

Կարևորվում է՝

- համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները,
- ճանապարհային տնտեսության, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում տարվող աշխատանքները,
- բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի գույքագրման ու ամրացմանն ուղղված ծրագրերի մշակման, նոր շենքերի կառուցման, ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

ՄԺԾԾ հիմնական նպատակն է ներկայացնել համայնքի ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսական գնահատականը:

Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է երկու մասից՝

1. համայնքի եկամուտները շարադրող մաս,

2. համայնքի՝ հնգամյա զարգացման ծրագրից բխող ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

ՄԺԾԾ-ն իրենից ենթադրում է գործընթացային ծրագիր, որն էլ ըստ էության իրենից ներկայացնում է քաղաքականությունների ձևակերպում-պլանավորում-բյուջետավարում տեսքով շղթա՝ դառնալով համայնքի բյուջեի կազմման ուղեցույց:

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում

2024 թվականին իրականացվում են 2022-2023 թթ սուբվենցիոն ծրագրերի շարունակական հետևյալ աշխատանքները.

Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 11, թիվ 6, թիվ 8 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և թիվ 4 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի, միջանցքի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքների իրականացում, Լեռնանիստ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքներ, մոդուլային մանկապարտեզի կառուցման աշխատանքներ, Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն և Մաքրավան, Միկրոշրջան և Հարավային թաղամասերի միջթաղամասային ճանապարհների հիմնանորոգման և Զ.Անդրանիկի պողոտայի բետոնե բաժանարարների կառուցման և տեղադրման աշխատանքներ, Հրազդան համայնքի տարածքում մայթերի նոր եզրաքարերի կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող աշխատանքների արդյունքում կունենանք բոլորովին նոր, հարմարավետ ու Էներգաարդյունավետ հաստատություններ՝ բոլոր չափանիշներին համապատասխան: Ծրագրերի իրականացման արդյունքում կփոխվի համայնքի երեխաների ուսման որակը, համայնքում կավելանա վերանորոգված ու հարմարավետ նախադպրոցական հաստատությունների թիվը և մանկապարտեզ հաճախող սաների թվի զգալի աճ կունենանք, ինչպես նաև կունենանք բարեկարգ ներհամայնքային ճանապարհներ:

Վերանորոգվում են նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների խոհանոցները:

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2024 թվականին նախատեսված է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 15 մակապարտեզի տանիքի վերանորոգման, նոր դռների և պատուհանների տեղադրման աշխատանքներ:

Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

Եկամուտներ գծով՝ 3 527 233.000 ՀՀ դրամ,

Ծախսերի գծով՝ 3 527 233.000 ՀՀ դրամ

Եկամուտների կանխատեսում.

Բյուջեի ընդամենը եկամուտներ տողում վարչական բյուջեի մասով ընդամենը նախատեսվել է 2 912 233.000 դրամ, որի մեջ մտնում են Հրազդան, Քաղսի, Սուլակ, Լեռնանիստ և Ջրառատ բնակավայրերի եկամուտների պլանները: Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողում պլանավորված 1 260 000.000 ՀՀ դրամ պլանային թվի մեջ մտած է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) պլանը 615 000 0000 ՀՀ դրամի չափով և 645 000 000 ՀՀ դրամի չափով ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի պլանային կանխատեսումը:

Եկամուտների պլանի մեջ սեփական եկամուտները կազմում են 1 733 684 830 դրամ, որը նախորդ տարվա եկամուտներից պակաս է պլանավորվել 241 451 091 ՀՀ դրամով: Պակաս է պլանավորվել համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտները, ՔԿԱԳ-ից պետական տուրքը, այլ հիմնական միջոցների իրացումից տուրքը:

Հարկեր և տուրքեր եկամուտների 2025 թվականի պլանը կազմում է 614 549 600 ՀՀ դրամ գումար, որի մեջ մտնում են հինգ բնակավայրերի հարկերի և տուրքերի պլանային թվերը: Ըստ բնակավայրերի պլանային թվերը կազմվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 189-Ն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ եկամուտների գծով կանխատեսվող պլանային թիվը կազմում է 2 434 550 200 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի պլանային թիվը՝ 1 812 795 800 ՀՀ դրամ, պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 615 000 000 ՀՀ դրամի չափով և պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 6 754 400 ՀՀ դրամի չափով:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը կանխատեսվում է 18 785 000 ՀՀ դրամի չափով, որից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին

քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար կանխատեսվել է 6 785 000 ՀՀ դրամի չափով, նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար եկամուտի պլանը կանխատեսվել է 12 000 000 դրամի չափով:

Համայնքի բյուջե մուտքագրվող տեղական տուրքերի պլանը կանխատեսվել է 47 138 000 ՀՀ դրամի չափով, որից համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար կանխատեսվել է 585 000 000 ՀՀ դրամի չափով, քանդման թույլտվության համար 160 000 ՀՀ դրամի չափով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար կանխատեսվել է 15 468 000 ՀՀ դրամի չափով: Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տուրքը կանխատեսվել է 4 400 000 ՀՀ դրամ: Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24.00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տուրքը կանխատեսվել է 1 200 000 ՀՀ դրամի չափով: Գովազդի թույլտվության տուրքը պլանավորվել է 11 960 000 ՀՀ դրամի չափով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ եկամուտի տողում կանխատեսվել է 3 998 000 ՀՀ դրամ՝ ՀՀ Արդարադատության նախարարության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Այլ եկամուտներ տողում հենասյունների վարձակալության վճարի հավաքագրման պլանը նախատեսվել է 10 000 000 ՀՀ դրամի չափով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սեփականության իրավունքի վկայագրերի պետական գրանցման վճարը

5000 000 ՀՀ դրամի չափով, համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ տողի պլանային թիվը կազմում է 82 000 000 ՀՀ դրամ: Գույքի վարձակալությունից եկամտի պլանը կանխատեսվել է 40 789 700 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների և այլ գույքի վարձակալությունից մուտքերի պլանային թիվը: Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամտի պլանը՝ 189 895 500 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է Հրազդան համայնքի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարների պլանները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարները կանխատեսվել է ամսական 6 000 դրամի չափով:

Տեղական վճարներ տողի եկամտի պլանը՝ 144 450 000 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է աճուրդների մասնակցության պլանը՝ 3 450 000 ՀՀ դրամի չափով, աղբահանության վճարը՝ 97 000 000 ՀՀ դրամի չափով, ինքնակամ կառուցված շենքերի-շինությունների օրինականացման վճարների եկամուտների պլանները՝ 40 000 000 ՀՀ դրամի չափով, շինարարության ավարտը փաստագրելու համար վճարը՝ 4000 000 ՀՀ դրամի չափով, մուտքեր տույժերից, տուգանքներից տողի եկամտի պլանը՝ 2 000 000 ՀՀ դրամի չափով:

## 2. Ծախսերի կանխատեսում.

Ծախսային մասում պլանավորվել է 3 527 233 000 ՀՀ դրամի ծախս, որից վարչական բյուջեի մասով՝ 2 912 233 000 ՀՀ դրամի չափով, ֆոնդային բյուջեի մասով 1 260 000 000 ՀՀ դրամի չափով: 1.1.1.51 գործառնական դասակարգմամբ բացված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծրագրով նախատեսվել է 502 072 500 ՀՀ դրամի ծախս, որից 483 572 500 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել

վարչական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով, 18 500 000 ՀՀ դրամի ծախս՝ ֆոնդային բյուջեի հոդվածներով:

Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով պլան նախատեսվել է 374 266 000 ՀՀ դրամի չափով: Այդ տողը ներառում է Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների և Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների աշխատավարձերի պլանները, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 191 «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումը, ինչպես նաև Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 197 որոշումը: Նախատեսվել են պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների համար 30 000 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների համար 2 600 000 ՀՀ դրամի չափով:

Էներգետիկ ծառայություններ հոդվածի պլանը կազմում է 35 000 000 ՀՀ դրամ, որը ներառում է Հրազդան համայնքի վարչական շենքի, բնակավայրերի վարչական շենքերի էներգետիկ ծառայությունների՝ գազի, էլեկտրաէներգիայի գծով ծախսերը, կոմունալ ծառայությունների ծախսը 2 200 000 ՀՀ դրամով իր մեջ ներառում է ջրմուղ-կոյուղու գծով ծախսերը:

Կապի ծառայությունների գծով Հրազդան համայնքի և «ԷՍԷԼԿԱ ՔԸՆԵՔՇԸՆ» ՍՊԸ-ի հետ, «Տելեկոմ» ՓԲԸ-ի և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի չափով նախատեսվել են պլաններ, որոնց հանրագումարը կազմում է 2 070 500 ՀՀ դրամ:

Նախատեսվել են ապահովագրական ծախսեր 980 000 ՀՀ դրամի չափով, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով, գործուղման, աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման զարգացման ծառայությունների գծով ծախսեր: Տեղեկատվական ծառայությունների գծով նախատեսվել են ծախսեր «Պաշտոնական տեղեկագիր» ՍՊԸ-ի և «Գործք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի վճարումներ կատարելու համար: Նախատեսվել են կառավարչական

ծառայությունների գծով ծախսեր , մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր և ներկայացուցչական ծախսեր:

Շենքերի և շինությունների կառուցում 5112 տնտեսագիտական հոդվածով նախատեսվել է պլան 5 000 000 ՀՀ դրամ, որը էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված Հրազդանի վարչական շենքի ջեռուցման համակարգի ներդրման ծախսն է:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 հոդվածով նախատեսվել է 10 000 000 ՀՀ դրամի ծախս, որով իրականացվելու է վարչական շենքի պատերի ամրացման և բակի բարեկարգման աշխատանքներ::

5122 հոդվածով նախատեսվել է 3 000 000 դրամ համակարգչային սարքավորումների ձեռք բերման նպատակով:

5129 հոդվածով նախատեսվել է 500 000 ՀՀ դրամի ծախս այլ մեքենաների և սարքավորումների ձեռք բերման նպատակով:

1.3.3 ծրագրով 4231 հոդվածով նախատեսել ենք 3 000 000 ՀՀ դրամի չափով փաստաթղթերի արխիվացման ծախսեր, 4232 հոդվածով 5 500 000 ՀՀ դրամի ծախսեր՝ «Վի ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ՏՀԶՎԿ» հասարակական կազմակերպության հետ պայմանագրերով՝ իրականացնելու ծրագրային սպասարկումներ:

4216 հոդվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով այլ մեքենաների վարձակալություն, 4239 հոդվածով նախատեսել ենք 2000 000 ՀՀ դրամի չափով ընդհանուր բնույթի այլ ծառայություններ:

1.6.1.51 ծրագրով նախատեսել ենք ծախսեր 82 734 800 ՀՀ դրամի չափով, որից 4241 հոդվածով 8 000 000 ՀՀ դրամ Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի, շենքերի և շինությունների չափագրման և սահմանված կարգով հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման համար, 4511 հոդվածով 57 734 800 ՀՀ դրամ Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախահաշվով պահպանման ծախսեր, իսկ 4823 հոդվածով՝ 10 000 000 ՀՀ դրամ միասնական տեղեկանքների տրամադրման աշխատանքների համար, իրավունքի պետական գրանցման կամ դադարեցման



աշխատանքների համար, այլ տեղեկատվության տրամադրման աշխատանքների համար, պատճենների տրամադրման, դատարան ներկայացվող հայցադիմումների պետական տուրքի վճարման համար, 4239 հոդվածով՝ 500 000 ՀՀ դրամ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ձեռք բերման համար,:

2.2.1 Քաղաքացիական պաշտպանության գծով՝ 4 500 000 ՀՀ դրամի չափով,

2.5.1 Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) ծրագրով՝ 1 000 000 դրամի չափով ծախս:

3 .2. 1 փրկարար ծառայության ծրագրով նախատեսված են ծախսեր՝ 1 500 000 ՀՀ դրամի չափով՝ անհետաձգելի, արտակարգ իրավիճակների, տարերային աղետների ժամանակ բնակչության համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար,

4.2.1 Գյուղատնտեսության ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 2 000 000 ՀՀ դրամ գյուղերի դաշտային ճանապարհների բարեկարգման նպատակով:

4.2.4 Ոռոգում ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 2 000 000 ՀՀ դրամ ոռոգման ցանցի խողովակների վերանորոգման նպատակով:

4.5.1.51 Ճանապարհային տրանսպորտ ծրագրով պլանավորվել է 606 700 000 ՀՀ դրամի ծախս, որից 4251 հոդվածով 40 000 000 ՀՀ դրամի չափով՝ փոսալցման և գծանշման աշխատանքների համար, 4239 հոդվածով պլանավորվել է 2000 000 ՀՀ դրամ տեղափոխման և այլ ընթացիկ ծառայությունների համար, 4241 հոդվածով նախատեսվել է 2 000 000 ՀՀ դրամ խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, 4269 հոդվածով 1 500 000 ՀՀ դրամ նախատեսվել է ճանապարհային նշանների ձեռք բերման համար, 5122 հոդվածով՝ 4 000 000 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել լուսացույցերի և տեսախցիկների ձեռք բերման նպատակով, 5134 հոդվածով պլանավորվել է 10 000 000 ՀՀ դրամ նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման նպատակով, 5113 հոդվածով պլանավորվել է 547 200 000 ՀՀ դրամ գումար՝ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար:

5.1.1.51 Աղբահանության ծրագրով պլանավորվել է 434 482 500 ՀՀ դրամ գումարով ծախս, որից 4111 հոդվածով 180 000 000 ՀՀ դրամ ծախսը՝ «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի պահպանման նախահաշվով որպես աշխատավարձ, 80 724 000 ՀՀ դրամով պլանավորվել է «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով աշխատավարձի գծով ծախս: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն

և սանմաքրում» հիմնարկի աշխատողների վարձատրությունը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 195 որոշմամբ: Պարզևատրման հոդվածով «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի համար նախատեսվել է 15 000 000 ՀՀ դրամի ծախս, իսկ «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով՝ 7 500 000 ՀՀ դրամի ծախս: Աղբահանության ծրագրով նախատեսվել են նաև կապի ծառայության վճար, աշխատողների ապահովագրության վճարներ, մեքենաների վարձակալության գումարներ, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր, գրասենյակային նյութերի, հագուստի, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման ծախսեր, բնապահպանական վճարների գծով ծախսեր: «Կոմունալ տնտեսություն,

աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի 4264 հոդվածով պլանավորվել է 90 000 000 ՀՀ դրամ տրանսպորտային նյութերի ձեռք բերման նպատակով: Նախատեսվել են նաև տրանսպորտային սարքավորումների, վարչական սարքավորումների, այլ մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև շենքերի և շինությունների ձեռք բերման ծախսեր:

6.3.1 Ջրամատակարարման ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է ծախս 900 000 ՀՀ դրամի չափով ջրամատակարարման խողովակների ընթացիկ նորոգման նպատակով, իսկ 5129 հոդվածով՝ 1 000 000 ՀՀ դրամի ծախս:

6.4.1.51 Փողոցների լուսավորում ծրագրով նախատեսվել է 4212 հոդվածով 60 000 000 ՀՀ դրամի ծախս, որում ներառված են համայնքի մեջ մտնող բնակավայրերի արտաքին լուսավորության ծախսը: Այս ծրագրում ներառել ենք «Հրազդանքաղլույս» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսը՝ 89 696 400 ՀՀ դրամի չափով:

6.6.1 Ծրագրով պլանավորվել է 19 500 000 ՀՀ դրամ գումարի ծախս, որն ուղղվելու է բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար իզոգամի և թիթեղի ձեռք բերմանը, ինչպես նաև ընդհանուր բնույթի այլ ծառայությունների և մասնագիտական ծառայությունների ձեռք բերմանը:

7.6.2 Առողջապահության ծրագրով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի ծախս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին առողջության պահպանման, բուժօգնության նպատակով:

8.1.1 Հանգստի, սպորտի ծառայություններ ծրագրով կրթական, մշակութային և սպորտային նպաստների գծով 4727 հոդվածով՝ 1 500 000 ՀՀ դրամի չափով:

8.2.3 Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրով պլանավորել ենք 119 920 000 ՀՀ դրամ գումար, որից 89 139 000 ՀՀ դրամի ծախս «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար, 30 781 000 ՀՀ դրամի չափով՝ «Հրազդանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

8.4.2 Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ ծրագրով 4639 հոդվածով նախատեսվել է 300 000 ՀՀ դրամ, 4819 հոդվածով 2 000 000 ՀՀ դրամ պլանավորված գումարից նախատեսվել են «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը և «Հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային խնամքի և զարգացման կենտրոն» երեխաների աջակցության հիմնադրամին նվիրատվություններ, 4621 հոդվածով նախատեսվել է 480 000 ՀՀ դրամ «Հայկական Կարմիր խաչ ընկերությանը» ընթացիկ դրամաշնորհ տրամադրելու նպատակով:

9.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրով պլանավորվել է 1 346 293 200 ՀՀ դրամի ծախս, որից սուբսիդիա 997 133 200 ՀՀ դրամի չափով, 4655 հոդվածով 97 660 000 դրամի չափով, որից 2 660 000 ՀՀ դրամի չափով նախատեսվել է տրամադրել Էներգախնայողության հիմնադրամին՝ ջեռուցման համակարգերի ներդրման ֆինանսավորման համար , 25 000 000 ՀՀ դրամի չափով թիվ 5 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 20 000 000 դրամի չափով թիվ 12 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար և 20 000 000 դրամի չափով թիվ 13 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 30 000 000 ՀՀ դրամ թիվ 16 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 4657 այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածով նախատեսվել է 1 500 000 ՀՀ դրամի չափով ծախս, որը նախատեսվել է թիվ 12, թիվ 13 և թիվ 16 ՀՈԱԿ-ների բակերի խաղահրապարակների և կարուսելների տեղադրման համար՝ յուրաքանչյուրին 500 000-ական ՀՀ դրամի չափով: 5113 հոդվածով նախատեսվել է 250 000 000 ՀՀ դրամի ծախս Հրազդան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 21-ի N 222 որոշումը, որի համաձայն ամսական աշխատավարձը կազմում է 45 002 300 ՀՀ դրամ, տարեկան աշխատավարձը կազմում է 540 027 600 ՀՀ դրամ:

Կապի ծառայության տարեկան գումարը կազմում է 924 000 ՀՀ դրամ /թվով 13 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների համար ամսական կազմում է 5 000 դրամ, , թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համար 7 000 դրամ: Էներգետիկ ծառայություններ՝ 4212 հողվածով նախատեսվել է 71 350 000 ՀՀ դրամի ծախս, որից ջեռուցման ծախսը կազմում է 45 500 000 ՀՀ դրամ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը կազմում է 25 850 000 ՀՀ դրամ, /1 երեխայի համար տարեկան կազմում է 10 000 դրամ/: Նախադպրոցական ուսումնական հաստատության 1 երեխայի համար նախատեսվել է օրական 30 լիտր ջուր /2585 երեխայի համար տարեկան կազմում է 8 911 800 ՀՀ դրամ/: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով 1 երեխայի համար նախատեսվել է 2000 դրամ ծախս /2585 երեխայի համար տարեկան կազմում է 5 170 000 ՀՀ դրամ/: Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար 1 խմբի հաշվով տարեկան նախատեսվել է 20 000 ՀՀ դրամ /93 խմբի համար տարեկան կազմում է 1 860 000 ՀՀ դրամ:

Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման համար 4241 հողվածով նախատեսվել է 2 531 400 ՀՀ դրամ, որից դեռատիզացիայի համար ծախս նախատեսվել է տարեկան 900 000 ՀՀ դրամի չափով, բուժզննման համար նախատեսվել է տարեկան 877 000 ՀՀ դրամի ծախս, գազի սպասարկման ծառայության համար 754 400 ՀՀ դրամի չափով: Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 4267 հողվածով նախատեսվել է 264 968 000 ՀՀ դրամի ծախս, որից 1 երեխայի համար հաշվարկվել է օրական 400 դրամ սննդամթերքի ծախս, որը 2585 երեխայի համար տարվա կտրվածքով կազմում է 260 568 000 ՀՀ դրամ, իսկ կենցաղային նյութեր ձեռք բերելու համար նախատեսվել է 4 400 000 ՀՀ դրամի ծախս, որից 3 720 000 ՀՀ դրամը նախատեսված է տնտեսական նյութեր ձեռք բերելու համար, թիվ 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի սպասքի ձեռք բերման համար նախատեսվել է 680 000 ՀՀ դրամ /1 խմբի հաշվով նախատեսվել է տարեկան 40 000 դրամ/: Հատուկ նպատակային այլ նյութեր ձեռք բերելու համար 1 երեխայի հաշվով նախատեսվել է տարեկան 2000 դրամ /2585 երեխայի համար տարեկան կազմում է 5 170 000 ՀՀ / դրամ: Համակարգչային ծառայություններ՝ 4232 հողվածով նախատեսվել է 282 000 ՀՀ դրամի ծախս, որից Լեռնանիստի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համար՝ 107 000 ՀՀ դրամ՝ ՀԾ հաշվապահական ծրագրի համար : Առողջապահական և լաբորատոր նյութեր՝ 4266 հողվածով նախատեսվել է 385 000 ՀՀ դրամի չափով ծախս, պարտադիր վճարներ՝ 4823 հողվածով նախատեսվել է 957 000 ՀՀ դրամի չափով

ծախս,որից 870 000 ՀՀ դրամ նախասվում է աղբահանության վճար, 87 000 ՀՀ դրամը՝ պարտադիր վճար, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4252 հոդվածով նախատեսվել է 448 000 ՀՀ դրամի ծախս, 1 040 000 ՀՀ դրամ նախատեսվում է 4231 հոդվածով՝ փաստաթղթերի արխիվացման համար, նախատեսվում է նաև 385 000 ՀՀ դրամ 4234 հոդվածով՝ տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Նախատեսվել են նաև նախորդ տարիների պարտքային պարտավորությունների գծով ծախսեր՝ 4269 հոդվածով՝ 922 000 ՀՀ դրամ ՎԻՊ ՖՈՒԴ ՍՊԸ-ին: 91 801 412 ՀՀ դրամ նախատեսվում է մոդուլային մանկապարտեզի աշխատակազմի տարեկան աշխատավարձի և պահպանման ծախսերի համար:

9.5.1 Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 200 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է ՀՈԱԿ-ների համար՝ 183 904 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 84 924 000 ՀՀ դրամ: Էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմել է ՀՈԱԿ-ների համար 10 780 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 9 000 000 ՀՀ դրամ, ջրամատակարարման տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 403 100 ՀՀ դրամ, իսկ

բյուջետային հիմնարկների համար՝ 600 000 ՀՀ դրամ: Կապի ծառայության տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 270 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 244 800 ՀՀ դրամ: Ներքին գործուղումները բյուջետային հիմնարկների համար կազմում է 450 000 հազար դրամ, ՀՈԱԿ-ների համար՝ 100 000 դրամ: Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող յուրաքանչյուր երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարի չափը սահմանվել է Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման համաձայն:

10.2.1 Ծերություն ծրագրով նախատեսել ենք 1 300 000 դրամի ծախս, որից 4216 հոդվածով 1 000 000 ՀՀ դրամ ծերերի ժամանցի վայրերի վարձակալության գումար՝ Ռոզա Շահբազյանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում վճարում

կատարելու նպատակով, 4269 հոդվածով 300 000 ՀՀ դրամ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման համար:

10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրով նախատեսել ենք 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 5 000 000 ՀՀ դրամի այլ նպաստներ բնակչությանը:

11.1.2 Հրազդան համայնքի բյուջեի վարչական մասում պահուստային ֆոնդ ծրագրով նախատեսել ենք 129 350 300 ՀՀ դրամի պահուստային միջոցներ:

2025 թվականին սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները:

1. Հրազդան համայնքի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
2. Հրազդան համայնքի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
3. Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
4. Հրազդան համայնքի Հարավային թաղամասի թիվ 2 մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
5. Հրազդան համայնքի Կոստան Չարյանի անվան արվեստի դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
6. Հրազդան համայնքի Զ. Անդրանիկի պողոտայի շրջանաձև խաչմերուկից մինչև պուրակային փողոց տանող ճանապարհի և 3-րդ փողոցի հողածածկ հատվածում ծառերի տնկման աշխատանքների իրականացում - 3 076 910 ՀՀ դրամ բնապահպանական մասհանումներ, 400 000 ՀՀ դրամ համայնքի ներդրում:

Հրազդան համայնքի 2026 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

Եկամուտներ գծով՝ 3 133 225 800 ՀՀ դրամ,

Ծախսերի գծով՝ 3 133 225 800 ՀՀ դրամ:

Եկամուտների կանխատեսում.

Բյուջեի ընդամենը եկամուտներ տողում վարչական բյուջեի մասով ընդամենը նախատեսվել է 2 902 325 800 ՀՀ դրամ գումարով պլան, որի մեջ մտնում են Հրազդան, Քաղսի, Սուլակ, Լեռնանիստ և Ջրառատ բնակավայրերի եկամուտների պլանները:

Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողում պլանավորված 835 700 000 ՀՀ դրամ պլանային թվի մեջ մտած է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) պլանը 230 900 000 ՀՀ դրամի չափով և 604 800 000 ՀՀ դրամի չափով ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի պլանային կանխատեսումը:

Եկամուտների պլանի մեջ սեփական եկամուտները կազմում են 1 683 577 590 ՀՀ դրամ, որը 2025 թվականի կանխատեսվող եկամուտներից նվազ է պլանավորվել 50 107 240 ՀՀ դրամով: 2026 թվականին նոտարական գրասենյակներից պետական տուրքի պլանը պակաս է կանխատեսվել է 7 000 000 ՀՀ դրամով, ինքնակամ կառուցվող շենք-շինությունների օրինականացման համար տեղական վճարի պլանը պակաս է պլանավորվել 13 000 000 ՀՀ դրամով, հողի իրացումից մուտքերը պակաս է պլանավորվել 40 000 000 ՀՀ դրամով:

Հարկեր և տուրքեր եկամուտների 2026 թվականի պլանը կազմում է 692 089 100 ՀՀ դրամ գումար, որի մեջ մտնում են հինգ բնակավայրերի հարկերի և տուրքերի պլանային թվերը:

Ըստ բնակավայրերի պլանային թվերը կազմվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 189-Ն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ եկամուտների գծով կանխատեսվող պլանային թիվը կազմում է 2 050 450 200 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի պլանային թիվը՝ 1 812 795 800 ՀՀ դրամ, կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 230 900 000 ՀՀ դրամի չափով, ընթացիկ սուբվենցիաներ տողում՝ 6 754 400 ՀՀ դրամ :

Այլ եկամուտներ տողում հենասյունների վարձակալության վճարի պլանը կանխատեսվել է 10 000 000 ՀՀ դրամի չափով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սեփականության իրավունքի վկայագրերի պետական գրանցման վճարը 7 000 000 ՀՀ

դրամի չափով, գույքի վարձակալությունից եկամտի պլանը՝ 40 723 000 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների և այլ գույքի վարձակալությունից մուտքերի պլանային թիվը: Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամտի պլանը՝ 191 065 500 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է Հրազդան համայնքի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարների պլանները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը կանխատեսվում է 11 455 000 ՀՀ դրամի չափով, որից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար կանխատեսվել է 6 455 000 ՀՀ դրամի չափով, նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար եկամտի պլանը կանխատեսվել է 5 000 000 ՀՀ դրամի չափով:

Համայնքի բյուջե մուտքագրվող տեղական տուրքերի պլանը կանխատեսվել է 49 153 000 ՀՀ դրամի չափով, որից համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար կանխատեսվել է 6 000 000 ՀՀ դրամի չափով, քանդման թույլտվության համար 160 000 ՀՀ դրամի չափով: Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար կանխատեսվել է 15 468 000 ՀՀ դրամի չափով:



Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղված բնական կամ նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տուրքը կանխատեսվել է 4 400 000 ՀՀ դրամ: Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24.00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տուրքը կանխատեսվել է 1 200 000 ՀՀ դրամի չափով: Գովազդի թույլտվության տուրքը պլանավորվել է 11 960 000 ՀՀ դրամի չափով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ եկամտի տողում կանխատեսվել է 3 998 000 ՀՀ դրամ` ՀՀ Արդարադատության նախարարության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Տեղական վճարներ տողի եկամտի պլանը` 135 900 000 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է աճուրդների մասնակցության պլանը` 5 900 000 ՀՀ դրամի չափով, աղբահանության վճարը` 97 000 000 ՀՀ դրամի չափով, ինքնակամ կառուցված շենքերի-շինությունների օրինականացման վճարների եկամուտների պլանները` 27 000 000 ՀՀ դրամի չափով, շինարարության ավարտը փաստագրելու համար վճարը` 6 000 000 ՀՀ դրամի չափով, մուտքեր տույժերից, տուգանքներից տողի եկամտի պլանը` 2 000 000 ՀՀ դրամի չափով:

## 2. Ծախսերի կանխատեսում.

Ծախսային մասում պլանավորվել է 3 133 225 800 ՀՀ դրամի ծախս , որից վարչական բյուջեի մասով` 2 902 325 800 ՀՀ դրամի չափով, ֆոնդային բյուջեի մասով 835 700 000 ՀՀ դրամի չափով:

1.1.1.51 գործառնական դասակարգմամբ բացված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծրագրով նախատեսվել է 547 692 500 ՀՀ դրամի ծախս, որից 534 192 500 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել վարչական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով, 13 500 000 ՀՀ դրամի ծախս` ֆոնդային բյուջեի հոդվածներով:

Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով պլան նախատեսվել է 374 266 000 ՀՀ դրամի չափով: Այդ տողը ներառում է Հրազդան համայնքի

աշխատակազմի աշխատողների և Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների աշխատավարձերի պլանները, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 191 «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումը, ինչպես նաև Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 197 որոշումը: Նախատեսվել են պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների համար 82 600 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների համար 3 300 000 ՀՀ դրամի չափով:

Էներգետիկ ծառայություններ հողվածի պլանը կազմում է 35 000 000 ՀՀ դրամ, որը ներառում է Հրազդան համայնքի վարչական շենքի, բնակավայրերի վարչական շենքերի էներգետիկ ծառայությունների՝ գազի, էլեկտրաէներգիայի գծով ծախսերը, կոմունալ ծառայությունների ծախսը 2 200 000 ՀՀ դրամով իր մեջ ներառում է ջրմուղ-կոյուղու գծով ծախսերը:

Կապի ծառայությունների գծով Հրազդան համայնքի և «ԷՍԷԼԿԱ ՔԸՆԵՔՇԸՆ» ՍՊԸ-ի հետ, «Տելեկոմ» ՓԲԸ-ի և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի չափով նախատեսվել են պլաններ, որոնց հանրագումարը կազմում է 2 070 500 ՀՀ դրամ:

Նախատեսվել են ապահովագրական ծախսեր 980 000 ՀՀ դրամի չափով, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով, գործուղման, աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման զարգացման ծառայությունների գծով ծախսեր: Տեղեկատվական ծառայությունների գծով նախատեսվել են ծախսեր

«Պաշտոնական տեղեկագիր» ՍՊԸ-ի և «Գործք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի վճարումներ կատարելու համար: Նախատեսվել են կառավարչական ծառայությունների գծով ծախսեր, մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր և ներկայացուցչական ծախսեր:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 հողվածով նախատեսվել է 15 000 000 դրամի ծախս:

5122 հողվածով նախատեսվել է 3 000 000 ՀՀ դրամ համակարգչային սարքավորումների ձեռք բերման նպատակով:

5129 հողվածով նախատեսվել է 500 000 ՀՀ դրամի ծախս այլ մեքենաների և սարքավորումների ձեռք բերման նպատակով:

1.3.3 ծրագրով 4231 հողվածով նախատեսել ենք 3 000 000 ՀՀ դրամի չափով փաստաթղթերի արխիվացման ծախսեր, 4232 հողվածով 5 200 000 ՀՀ դրամի ծախսեր՝ «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ՏՀԶՎԿ» հասարակական կազմակերպության հետ պայմանագրերով՝ իրականացնելու ծրագրային սպասարկումներ:

4216 հողվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով այլ մեքենաների վարձակալություն, 4239 հողվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով ընդհանուր բնույթի այլ ծառայություններ:

